

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի
պետաիրավական հետազոտությունների բաժնի ասպիրանտ,
ՀՀ արդարադատության նախարարության «Աշտարակ»
նոտարական տարածքի նոտարի օգնական

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հոդվածը նվիրված է իրավունքի սկզբունքների հասկացությանը, տեսական և գործնական նշանակությանը: Հոդվածում դիտարկվել են պետության և իրավունքի տեսության մեջ այն տեսաբանների մոտեցումները, որոնք առավել հստակ և ամբողջական ձևով արտացոլում են իրավունքի սկզբունքների ողջ էությունը: Անդրադարձ է կատարվել իրավունքի սկզբունքների տեսական և պրակտիկ կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրներին՝ հիմք ընդունելով հայրենական և միջազգային փորձը: Ըստ հեղինակի՝ իրավունքի սկզբունքների ճշգրիտ բնորոշումը թույլ է տալիս տեսաբաններին և պրակտիկ իրավաբաններին կատարել ճիշտ եզրահանգումներ, որոնց արդյունքում իրավունքի սկզբունքները, ներդրվելով, օրենսդրական համակարգում, կարող են ապահովել պետության և հասարակության, պետության և անհատի անքակտելի կապը՝ հիմք դնելով իրավական և ժողովրդավար պետությանը:

Հիմնարար- իրավունքի սկզբունքներ, իրավահարաբերություն, պետություն, հասարակություն, քաղաքացի, իրավական կարգավիճակ:

«Սկզբունք» եզրույթը մետաֆիզիկայում բնորոշվում է որպես առաջնային գաղափար, հիմք, որից բխում է յուրաքանչյուր երևույթ: Ցանկացած հարաբերություն կառուցվում և կարգավորվում է որոշակի սկզբունքների հիման վրա: Իրավունքի համակարգը նույնպես բացառություն չէ: Իրավունքը ևս ծագում և գործում է որոշակի սկզբունքների հիման վրա: Պետության՝ որպես ինստիտուցիոնալ կառույցի ձևավորվելու հետ զուգահեռ ի հայտ եկան սկզբունքներ, որոնք, ժամանակի ընթացքում հղկվելով, վերածվեցին իրավունքի սկզբունքների: Իրավունքի սկզբունքները հանդիսանում են օբյեկտիվ իրականության, միջազգային պրակտիկայի, հասարակական զարգացման արտացոլումը, որոնք ձևավորվել են դարերի ընթացքում:

Իրավունքի սկզբունքներն ընկած են իրավական պետության, պետական իշխանության բոլոր մարմինների գործունեության հիմքում: Այս հանգամանքով պայմանավորված՝ իրավունքի նորմերի բազմության մեջ առանձնանում են իրավահարաբերության սուբյեկտների կողմից հիմնարար ճանաչում ունեցող ելակետային դրույթներ, որոնք անվանվում են իրավունքի սկզբունքներ: Իրավունքի սկզբունքների հասկացության բնորոշումները տրվել են բազմաթիվ իրավագետների կողմից տարբեր ժամանակներում: Փորձենք դիտարկել իրավագետների առավել լայն շրջանակների կողմից ընդունելի մոտեցումները:

Օ. Ի. Յիբուլսկայան իրավունքի սկզբունքը բնութագրում էր որպես իրավունքի հիմնական

հիմք, որն ունի կարգավորիչ հատկանիշ, արտահայտում է օբյեկտիվ օրինաչափությունները, համակցում է հասարակական զարգացումները և պահանջումները, ամրագրվում է որպես համապարտադիր կանոն և հանդիսանում է ողջ իրավական համակարգի բովանդակությունը: Ըստ նրա՝ իրավունքի սկզբունքները ունեն բարոյական հիմք, քանի որ միմիայն իրավունքի համապատասխանությունը հասարակական բարոյական արժեքներին կարող է ապահովել առողջ և առաջադիմական զարգացումներ:

Ս. Ս. Ալեկսեևի բնորոշմամբ՝ իրավունքի սկզբունքներում արտացոլվում են իրավունքի գլխավոր հատկանիշները, առանձնահատկությունները, հիմնավորված, արդարացված ազատությունը կամ վարքագծի դրսևորման հնարավորությունը, որը ճանաչվում է հասարակության կողմից:

Ս. Ի. Բայտինի կարծիքով՝ իրավունքի սկզբունքները համապարտադիր, ձևական որոշակի նորմերի համակարգ է, որը արտացոլում է հասարակության պետական կամքը, նրա ընդհանուր մարդկային և դասակարգային բնույթը, հրապարակվում կամ սանկցավորվում է պետության կողմից և պահպանվում է խախտումներից հարկադրանքի կիրառման հնարավորությամբ, հանդիսանում է հասարակական հարաբերությունների իշխանապաշտական կարգավորիչ³: Չնայած Բայտինի ձևակերպումն ընդունվում է բազմաթիվ իրավագետների կողմից, այնուամենայնիվ, հեղինակը կարծում է, որ տվյալ բնորոշումը բավարար չափով

www.journal.lawinstitute.am

չի արտահայտում իրավունքի սկզբունքների ողջ էությունը, քանի որ Բայտինը, լինելով նորմատիվիստական տեսաբան, գտնում էր, որ իրավունքի սկզբունքների ամրագրումը և հրապարակումը կարող է կրել ձևական բնույթ, և շատ հաճախ դրանց ուղղակի իրացումը կախված է պետական ռեժիմից: Ս. Ս. Ալեկսեևի մոտեցումը, լինելով լսկոնիկ, ավելի հստակ է արտահայտում իրավունքի սկզբունքների էությունը: Վերջինս նշում է, որ դրանք արտացոլում են իրավունքի բնույթը՝ հատուկ շեշտելով այն պարտադիր կանոնը, որ դրանք պետք է ընդունված լինեն հասարակության կողմից: Եթե փորձենք համեմատել Բայտինի և Ալեկսեևի մոտեցումները, կարելի է ասել, որ ըստ Ալեկսեևի՝ հասարակությունը անուղղակի կերպով ստեղծում է իրավունքի սկզբունքների համակարգը: Այսինքն՝ հասարակությունը ձևավորում է իշխանությունը, որը ամրագրում է հասարակության կողմից ճանաչված իրավական սկզբունքները: Իսկ Բայտինը հասարակության դերը համարում է երկրորդական՝ առաջնային համարելով պետական ռեժիմը, քանի որ ռեժիմը ներկայացնող իշխանությունը, ընտրվելով հասարակության կողմից, լայն իրավասություն է ստանում իրավունքի սկզբունքների դերը մղել երկրորդական պլան կամ առաջնորդվել միայն դրանցով, քանի որ, ըստ Բայտինի, ոչ միշտ է իշխանությունը արդարացնում հասարակության սպասելիքները, հատկապես ոչ դեմոկրատական երկրներում:

Վ. Ս. Ներսիսյանցի դիրքորոշման համաձայն՝ իրավունքի սկզբունքներն ամրագրում են իրավահարաբերությունների համար ելակետային նշանակություն ունեցող ղեկավար կանոններ և հանդիսանում են իրավունքի ամբողջ համակարգի հիմք⁴:

Ն. Վ. Վիտրուկը գտնում էր, որ առաջին հերթին, իրավունքի սկզբունքները իրավական փաստերի և իրավական փորձի համակցված արտահայտումն են, որի արդյունքում ծնվում է հիմնարար գաղափարը՝ իրավունքի սկզբունքը: Երկրորդ՝ իրավունքի սկզբունքը հենց օրենքն է, քանի որ ուղղակի կամ անուղղակի կերպով արտահայտվում է օրենքում՝ արտացոլելով իրականում գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների ողջ էությունը⁶:

Ս. Ե. Ֆրոլովի դիրքորոշման համաձայն՝ իրավունքի սկզբունքները բնութագրվում են որպես կանոններ, որոնք հանդիսանում են հասարակական հարաբերությունների շարժիչը և այդ հարաբերությունների գլխավոր կամ հիմնական կարգավորման արտահայտման ձևը⁷: Ֆրոլովի մոտեցումներում իրավունքի սկզբունքների իրավական ամրագրման խնդրին նշանակություն չի տրվում այն հանգամանքից ելնելով, որ դրանք ուղղակի կախված են

հասարակության պահանջումներից:

Առավել հստակ մոտեցում է առաջարկում Լ. Ս. Յավիչը: Յավիչը գտնում էր, որ. «իրավունքի սկզբունքները մեկնարկային գաղափարներ են, որոնք համարվում են կարևորագույն օրինաչափություններ և կազմում են տվյալ հասարակության սոցիալ-տնտեսական ֆորմացիայի հենքը և համասեռ իրավական նորմերի էությունը, ունեն բազմակողմանիության և համընդհանրության հատկանիշներ, օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով (իմպերատիվությամբ), ինչպես նաև համապատասխանում են իշխող ռեժիմի օբյեկտիվ պահանջներին»⁸: Յավիչի և Բայտինի դիրքորոշումները իրավունքի սկզբունքների մասով շատ ավելի հստակ են արտացոլում դրանց էությունը: Վերջիններս առանձնակի ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, որ իրավունքի սկզբունքների իրացումը խիստ կախված է պետական ռեժիմից: Իսկապես, իրավունքի սկզբունքներ են հանդիսանում այն նորմերը, որոնք, առավել կարևորություն ունենալով իրավահարաբերությունների կարգավորման հարցում, պարտադիր են իրավունքի բոլոր սուբյեկտների համար: Առանձին պետություններ, հասարակության մեջ առկա խմբեր կամ անհատներ չեն կարող չեղյալ հայտարարել կամ փոփոխել դրանք: Սակայն ակնհայտ է, որ լինում բազմաթիվ պետություններում առկա օրենսդրական բացերի, որոնք գրեթե միշտ հանգեցնում են իրավական կոլիզիաների: Վիճակագրական տվյալներով «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի» որոշումների մեծ մասում ճանաչվում է իրավունքի որևէ սկզբունքի սահմանափակում կամ իրացման համար խոչընդոտների առկայություն⁹:

Իրավական կոլիզիաների արմատները շատ ավելի խորն են, քան կարող ենք պատկերացնել: Նույնիսկ եվրոպական մայրցամաքի զարգացած երկրներում հասարակությունը, ունենալով բարձր իրավագիտակցություն, բախվում է նմանատիպ օրենսդրական բացերի հետ: Խնդիրը չի կայանում նրանում, որ օրենսդրական ակտերը հիմնված չեն իրավունքի սկզբունքների կամ դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած նորամուծությունների վրա. պարզապես իրավակիրառ մարմինները շատ հաճախ անտեսում են այն հանգամանքը, որ հասարակությունը ունի լիարժեք հնարավորություն՝ մասնակցելու անուղղակի օրինաստեղծ գործունեությանը: Նմանատիպ վարքը այս կամ այն օրինաստեղծ և իրավակիրառ մարմինների կողմից շատ խորը և լուրջ հետևանքներ է պարունակում, քան կարող ենք պատկերացնել: Պետական պաշտոնատար անձանց սուբյեկտիվ վարքը պայթյունավտանգ է ոչ միայն անհատ քաղաքացիների, հասարակության համար, այլ նաև լուրջ մարտահ-

րավեր է նետում պետության անվտանգությանը: Ուստի, պետք է նշել, որ իրավունքի սկզբունքների ամրագրումը բավարար պայման չէ դրանց լիարժեք գործունեության համար: Անհրաժեշտ է իրավունքի սկզբունքների ճշգրիտ կիրառումը:

Բայտինի և Յավիչի դիրքորոշումները ընդհանրացնելով՝ կարելի է մեկնաբանել հետևյալը: Իրավունքի սկզբունքները իսկապես ուղղակի արտահայտում են տվյալ հասարակության պահանջ-մունքները, սոցիալ-տնտեսական ասպեկտները, սակայն միայն իրավունքի սկզբունքների ամրագրվածությունը նորմերում չի կարող լինել երաշխիք դրանց անարգել իրացման համար, քանզի իրավունքի սկզբունքների գործունեությունը լինելու հանգամանքը մեծ հաշվով կախված է իշխող ռեժիմից:

Իրավագետների ճնշող մեծամասնությունը, ունենալով տարբեր մոտեցումներ իրավունքի սկզբունքի հասկացության նկատմամբ, իրենց բնորոշումներում հանգում են այն եզրակացությանը, որ իրավունքի սկզբունքների միջոցով արտահայտվում է իրավունքի էությունը, սոցիալական նշանակությունը և նրա դերը հասարակական հարաբերություններում, ինչպես նաև իրավունքի սկզբունքները կարող են հատուկ ամրակալվել ընդհանուր իրավաբանական նորմերում՝ սահմանադրություններում, օրենքների ներածական մասերում (պրեամբուլաներում), օրենսգրքերում կամ ներթափանցելով իրավական նորմերի ներքին բովանդակության մեջ՝ կազմել հենց իրավունքի նյութը:

Տեսաբանների բնորոշումները համադրելով՝ կարելի է տալ իրավունքի սկզբունքների ձևակերպումը: Իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ձևով ամրագրվում են իրավական նորմերում, հանդիսանում են իրավական համակարգի հենասյունը, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ, և դրանց ուղղակի իրացումը կախված է գործող ռեժիմի գործողություններից:

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» բաժնում ուղղակի և անուղղակի կերպով ամրագրված են իրավունքի որոշ սկզբունքներ՝: Օրինակ՝ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձ-

նական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»¹¹: Մեկ այլ հոդվածով սահմանվում է, որ. «Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»¹²: Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի մասին ուղղակի նշում են պարունակում Ճապոնիայի սահմանադրության 98-րդ հոդվածը, Պորտուգալիայի սահմանադրության 277-րդ հոդվածը:

ՀՀ սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրված իրավունքի սկզբունքները թույլ են տալիս եզրակացնել, որ քաղաքակիրթ աշխարհի առողջ զարգացումն ապահովող իրավունքի սկզբունքները դարձել են նաև ՀՀ իրավական համակարգի հիմնասյունը: Ուսումնասիրելով միջազգային պրակտիկան իրավունքի սկզբունքների մասով՝ պետք է նշել, որ ՌԴ Սահմանադրությամբ նույնպես ամրագրված է բոլոր քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը, այն է՝ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առաջ՝:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ իրավունքի սկզբունքների ամրագրումը առաջադեմ երկրների մայր կամ հիմնական օրենքներում քաղաքացիների համար ստեղծում է հենարան՝ ազատ ծավալելու ցանկացած գործունեություն օրենքի շրջանակներում: Այդ է պատճառը, որ իրավունքի սկզբունքները, ներթափանցելով իրավական համակարգի մեջ, կազմելով պետության ամբողջ իրավական համակարգի միջուկը, հանդիսանում են պետության զարգացման խթանը: Այստեղից էլ բխում է իրավունքի սկզբունքների որոշիչ նշանակությունը իրավաբանական պրակտիկայում՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համար: Իրավունքի սկզբունքների ամրագրումը, ճշգրիտ և անշեղ իրականացումը թույլ է տալիս ոչ միայն պրակտիկայում կիրառվող իրավունքի սկզբունքների կյանքի կոչում, հասարակության իրավագիտակցության բարձրացում, այլ նաև իրավունքի հիմնարար սկզբունքներով առաջնորդվող իրավական պետության ստեղծում: Այս հիմնավորմամբ էլ իրավունքի սուբյեկտները իրավական բնույթի հարցեր լուծելիս պետք է առաջին հերթին անդրադառնան պատմության ընթացքում ձևավորված իրավունքի սկզբունքներին: Նորմերի կիրառման արդյունքում, հղում անելով իրավունքի սկզբունքներին, կընդունվեն համապատասխան պետական մարմինների կողմից օրինական և հիմնավորված օրենսդրական ակտեր և որոշումներ: Սա նշանակում է, որ հասարակական հարաբերությունների յուրաքանչյուր համակարգ կարգավորվում է ոչ թե ինքնակամորեն, այլ օբյեկտիվ պահանջներին համապատասխան, որոնք այս կամ այն ձևով արտացոլվում են իրավունքի համակար-

գում և կազմում նրա էությունը: Սակայն, պետք է նշել այն հանգամանքը, որ իրավունքի սկզբունքների ամրագրումը օրենսդրական ակտերում և դրանց կիրառումը հասարակական հարաբերությունների կարգավորման ընթացքում պայմանավորված է պետական իշխանության կառուցվածքով, հասարակության քաղաքական համակարգով, հասարակության սոցիալ-տնտեսական իրավիճակով, ինչպես նաև պետություն-քաղաքացի, պետություն-հասարակություն իրավահարաբերությունների շրջանակով:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ իրավունքի սկզբունքները հիմնարար և առաջնային գաղափարներ են, որոնք կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ուստի, սկզբունքների սխալ կիրառության կամ բացակայության պարագայում պետությունը, հասարակությունը և անհատը կարող են կանգնել լուրջ և անհաղթահարելի սոցիալական անարդարության առաջ: Անհրաժեշտ է ընդգծել, որ իրավունքի բոլոր սկզբունքները սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ, և իրավունքի սկզբունքներից մեկի

թերի լինելու կամ բացակայելու համգամանքը կարող է հանգեցնել սոցիալական անարդարության, այնուհետև պետություն-անհատ փոխհարաբերությունների վատթարացման, ընդհուպ մինչև դրանց խզման: Արիստոտելը նշում էր, որ արդարությունը սերտորեն կապված է մարդկանց հավասարության և օրինականության հասկացությունների հետ, քանի որ արդարությունը հանդես է գալիս որպես օրինական և հավասար, իսկ անարդարությունը՝ որպես անհավասար վերաբերմունք դեպի անհատը¹⁴: Այս հանգամանքով է պայմանավորված այն փաստը, որ իրավունքի սկզբունքների ճիշտ ամրագրման, հմտորեն կիրառման և դրանց անարգել իրացման դեպքում միայն մեզանից յուրաքանչյուրին կարող է հնարավորություն տրվել ապրել իրավական պետությունում, որն էլ հանդիսանում է յուրաքանչյուր քաղաքացու ամուր հենարանը սեփական իրավունքները և ազատությունները կյանքի կոչելու հիմնախնդրում:

¹ Տե՛ս Ծыбтлевская О.И. “Нравственные основания современного российского права”, под. редакции Н. И. Матузова, Саратов, ГОУ ВПО “Саратовская государственная академия прав”, 2004, С.14.
² Տե՛ս Алексеев С.С., Архипов С.И. и др., “Теория государства и права”, М., Норма. 2005, С. 161.
³ Տե՛ս Байтин М. И. “Сущность права” /Современное нормативное правопонимание на грани двух веков: микроформа /Саратов, СГАП 1-ое изд., 2001, С. 150.
⁴ Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս. «Պետության և իրավունքի տեսություն», Եր., Նաիրի, 2001թ., էջ 300:
⁵ Տե՛ս Принципы права: материалы всероссийской научно-теоретической конференции., СПб., 2007. , С. 341.
⁶ Տե՛ս Принципы права: материалы всероссийской научно-теоретической конференции. СПб., 2007., С. 341-342.
⁷ Տե՛ս Фролов С. Е. “Принципы права” (Вопросы теории и методологии): Автор. дисс. канд. наук., Н. Новгород, 2011, С. 49.
⁸ Տե՛ս Явич Л.С. “Общая теория права”, под. ред проф. А.И. Королева, изд. ЛГУ, Ленинград, 1976, С. 153.
⁹ Տե՛ս “Humanrightswatch” report “Жалоба 2947/06, Исмоилов и другие против России” Представление, внесенное в Европейский суд по правам человека Хьюман Райтс Вотч и Центром AIRE. англ., 05.08.2007г.
¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 1995թ.հուլիսի 5-ին, Հանրաքվե, 2015թ.դեկտեմբերի 6-ի փոփոխություններով. գլուխ 2-րդ. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները 25, 27, 31, 32, 33, 34, 40, 41, 44, 45, 46-րդ հոդվածներ:
¹¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 1995թ.հուլիսի 5-ին, Հանրաքվե, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով. հոդված 14.1:
¹² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 1995թ.հուլիսի 5-ին, Հանրաքվե, 2015թ.դեկտեմբերի 6-ի փոփոխություններով. հոդված 5 «1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ»:
¹³ Տե՛ս Конституция Российской Федерации, Официальное издание, 2009, С. 64 /Статья 19/.
¹⁴ Տե՛ս Аристотель “Политика”// Сочинения в 4-х томах. М., Мысль, 1983, Том 4, перевод С.А. Жебелева, 2000, С. 99.

Լիանա Մալխասյան

Аспирант государственного-правового отдела института философии, социологии и права Национальной Академии Наук РА, помощник нотариуса нотариальной территории “Ашггарак” министерства юстиции РА

РЕЗЮМЕ

Концепция принципов права. Теоретическое и практическое значение

Эта статья посвящена концепции принципов права, теоретического и практического значения. В статье исследованы те подходы теоретиков, которые в теории государства и права отражают наиболее полностью и точным образом всю сущность принципов права. Ссылка делается на такие проблемы принципов права, которые возникают при теоретическом и практическом применении принципов права, основываясь на международном опыте. По мнению автора, точное определение принципов права позволяет теоретикам и практикам-юристам, сделать выводы, в результате чего принципы права, введенные в законодательную систему, обеспечивают неразрывную связь между государством и обществом, государством и частными лицами, устанавливая начало правового государства.

Ключевые слова: принципы права, правоотношение, государство, общество, гражданин, правовой статус.

Liana Malkhasyan

PhD of the department of state and legal studies of the institute of philosophy, sociology and law of national academy of sciences RA
Ministry of Justice RA of notary territory “Ashtarak”
Notary assistant

SUMMARY

The concept of the main principles of law, to the theoretical and practical meaning

This article is devoted to the concept of the main principles of law, to the theoretical and practical meaning. The approaches of those theorists in the theory of state and law, who reflect the whole essence of the principles of law most precisely and completely, were observed in the article. Reference was made to the issues that appeared during the theoretical and practical application of the principles of law, based on national and international experience. According to the author, the precise definition of the main principles of law lets the theorists and practicing lawyers to make right conclusions, as a result of which the principles of law, being put into the legislative system, can maintain the indissoluble bond between the state and the society, between the state and the individual, establishing a legal and democratic state.

Keywords: Principles of law, law relationship, state, society, citizen, legal status.